*ղաք ի Քուիշափոր, եւ][1] զԲողնոփոր, մինչեւ զՊարուար գաւառ, որ պատէ զՏփխիս[2] քաղաքաւ. բայց երեք[3] փորակդ ի Հայոց հանէ[4]:* 97 *Իսկ ըստ հիւսի՛սո[յ][5] գետի[6] մեծին Կուրա[յ], հանդէպ Թար[գաւ][7] գաւառի՝ Արգ[ո]ւէթ[ո]ւ[8] լեռունք, եւ ի նոյն կողմանէ դաշտին՝ Դ[ո]ւան[9] եւ Աչէւէտիսխեւ[10] եւ Քորդիթիրի, Կոսխեւ[11], մինչեւ ցՍացխումէթ, որ՝ ի ստորոտս Կովկասու:* 98 *Յորմէ հոսի* [22բ] *Լէխ գետ, եւ անցեալ ի հարաւ կոյս՝ իջանէ ի Կուր. եւ առ նովաւ՝ Խառնիսխեւ ի Ցխրասձմայա[յ][12], մինչեւ ցԱրագւ[13] գետ, որ հոսի ի Կաւկասա[յ], եւ գնալով ընդ հարաւ, ընդ Ախալցիխէ բերդ՝ եւ անցան[է][14] ընդ մէջ [Մ]ցխիթա[յ][15] քաղաքի եւ բլրո[յ] Սուրբ Խաչին, իջանէ ի Կուր եւ բովանդակի ի Վերի[16] աշխարհ Վրաց:* 99 *Յորմէ յառաջ խաղացեալ Կուր՝ գա[յ] ի Տփխիս մայրաքաղաք Վրաց՝ զնա թողլով Պարուարաւ, եւ զԾոփոփոր եւ զԿողբոփոր եւ զՁորոփոր՝ հոմանուն գետաւք, մինչեւ ց[Հ]նարակերտ[17] քաղաք, զորս ի Հայոց հանեալ է:* 100 *Որոց ըստ հարաւո[յ]՝ լե՞ռնադաշտքն[18] Ջաւախաց[19]՝ բազում լճաւք, լի զանազան ձկամբք[20], եւ Թռեղք[21] եւ Տաշիր, որոց ի հարաւ՝ Կանգարքա[յ]. զամենդ[22] ի Հայոց հանեալ է:* 101 *Իսկ հանդէպ դոցա, ըստ հիւսի՛սո[յ][23] կողմանէ Կուրա[յ] գաւառք՝ [Կ]խ[ո]ւէթ, [Բալզալէթ][24], Խերկ, Երձւոյ[25], Թիանէթ, Ծոբէնոր, [Ծու-*

---

1 *VS չիք* զՍամշուլդէ … զՔուիշափոր եւ *(վեր.* (*տե՛ս* զՄանգլեացփոր, եւ … Քուիշափոր, եւ), Քուիշափոր գաւառ-*ը*՝ *Երեմեանի*՝ *ըստ համառօտի նոյն տեղի*՝ «Տոռնիսխեւի (*AE* Տառնիախ, $Dv^{2}$ Տոռնիսխեւ, $vv_{\text{տ}}$ Տառնիասխք; *ըստ Երեմեանի*՝ Տանիսխեւ), Մանգղեացփոր, Քուիշափոր, Բողնոփոր (*AE* Քուեշփոր, Բողնափոր)», *իսկ* Սամշուլդէ *քաղաքը* (*DPv-ում*՝ Շամշուդէ)՝ *ըստ նրա ամփոփիչ աւարտի, տե՛ս նախ. 102-ի ծնթ.)*

2 *V* զՏիփխիս *փխ* զՏփխիս *(վեր. Սուքրեանի*՝ *ըստ յաջորդի, տե՛ս մի քանի տող յետոյ)*

3 *V* գ̆

4 *S* հանեալ է *փխ* հանէ *(V.* **նէ**-*ի վերեւում ուշ ձեռացագրով գրուած է* [**ե**]**ալ**. *հմմտ. Ե.96-ի ծնթ.)*

5 *V* հիւսիւսո *փխ* հիւսիսո[յ] *(վեր. Սուքրեանի)*

6 *S* գետոյն *փխ* գետի *(V)*

7 *VS* Թար *փխ* Թար[գաւ] *(վեր., տե՛ս* Թար**գաւ** – **գաւ**առ՝ *այս գաւառանունը նոյնացնելով նախադասութեան սկզբում համառօտից մեր վերականգնած* Թ**ո**րգ**ով**-*ի հետ)*

8 *V* Արգւէթւ, *S* Արգւէթու *փխ* Արգ[ո]ւէթ[ո]ւ *(վեր.)*

9 *VS* Դւան *փխ* Դ[ո]ւան *(վեր. Երեմեանի. համառօտում* Գուան *է, տե՛ս բոլորագիր* **դ** → **գ***)*

10 *V* Աչէւէտիսխէւ *փխ* Աչէւէտիսխեւ *(վեր. Սուքրեանի. ըստ Երեմեանի*՝ *վեր-նելի է*՝ Աչաբէթիսխեւ. *համառօտի խմբագրած ցանկն է.* «Աչաւ (*P* Աչայի) եւ Գուան, Երիսխ (*E* Դուան, Ետիսխ)»*)*

11 *VS* Քորդիթիրիկոսխեւ *փխ* Քորդիթիրի, Կոսխեւ *(վեր.*՝ *ըստ համառօտի, ուր գաւառների թուարկումն է.* «Քուդիթ, Կաւկիսխ (*DPv* Կոսխ, $v^{1}$ Կանիսխ), Սացխումէթ». *ըստ Երեմեանի*՝ *վերականգնելի է* «[Ռեխա], Գուերդիսձիրի, Կոսխ եւ»*)*

12 *VS* Ցխրասձմայա *փխ* Ցխրասձմայա[յ] *(վեր., համառօտի AE-ն ունի խմբագրած թուարկում*՝ «Սացխումէթ, Խանիսխ, Ցիւրաս Ձմա, Բալզալեթ», *իսկ DPv-ն* Խանիցխ-*ից յետոյ գաւառներ չունեն)*

13 *S* յԱրագւ *փխ* ցԱրագւ *(V. արդեօ՞ք* ցԱրագ[ո]ւ *է)*

14 *V* անցան *փխ* անցան[է] *(վեր. Սուքրեանի)*

15 *V* ցխիթա *փխ* Մցխիթայ *(վեր. Սուքրեանի. գուցէ եւ, սկզբնատառը նախագաղափարում են բաց թողել*՝ *յետոյ գլխատառ նկարելու, եւ մոռացել են անել դա. նման պակաս տե՛ս 2 ծնթ. ստորեւ)*

16 *S* Վերին *փխ* Վերի *(V. հմմտ. նախորդը*՝ *նախ. 96)*

17 *V* ցնարակերտ *փխ* ցՀնարակերտ *(վեր. Սուքրեանի, ով ծանօթագրել է.* «Յօր. *ցՆարակերտ*»*)*

18 *VS* լեառնադաշտքն *փխ* լե՞ռնադաշտքն *(վեր.*՝ *ըստ այլոց. օր.*՝ *Բ.9, 24, 29, Գ.58, Դ.23, Ե.78 եւն)*

19 *Գրիչը նախ գրել է* Ջաւախեաց, *ապա կիսատպոատ մաքրել աւելորդ* **ե**-*ն*

20 *Գրիչը նախ գրել է* ձկեամբք, *ապա կիսատպոատ մաքրել աւելորդ* **ե**-*ն*

21 *Անուան վերեւում ուշ ձեռացագրով «ծանօթագրած» է* շաքի, *յաջորդ*՝ Տաշիր-*ի վերեւում*՝ լաւռէ

22 *VS* Գանկարքա. զամէնդ *փխ* Կանգարքա[յ]. զամենդ *(վեր.*՝ *ըստ համառօտի, ուր գաւառների խմբագրուած թուարկումն է.* «Բողնոփոր, Թռեղք, Կանգարք, Տաշիր, եւ Աչաւ». *տե՛ս բարբառային* **կ** → **գ** → **կ**. *մեր բնագիրը պիտի ընկալուի իբրեւ*՝ «որոց ի հարաւ [ե՛ն լեառնադաշտքն] Կանգարքայ», *թէեւ քերականօրէն անթերին կը լինէր*՝ Կանգար**աց**. *Սուքրեանի ծանօթագրմամբ*՝ «Յօր. են *Կանգարք*». ամե**ն**-*ի վերականգնման համար հմմտ. նախ. Ա.8-9, Բ.35, Ե.55, 319 եւն)*

23 *V* հիւսիւսո *փխ* հիւսիսոյ *(վեր. Սուքրեանի)*

24 *VS* Խուէթ *փխ* [Կ]խ[ո]ւէթ, [Բալզալէթ] *(վեր.*՝ *ըստ համառօտի, ուր գաւառների թուարկումը խմբագրուած է*՝ «Բալզալեթ, Կխուեթ…», *տե՛ս* Կխու**էթ** – Բալզալ**էթ**. *ըստ Երեմեանի*՝ *վերջինը վերականգնելի է նախ. 98-ում*՝ «Կոնիս-խեւ եւ Ցխրազմայ, [եւ Բազալէթ] եւ [Մտ]կուրիս-խեւ» *փխն.* Խառնիսխեւ ի Ցխրասձմայա[յ]*)*

25 *VS* Էրձւոյ *փխ* Երձւոյ *(վեր., համառօտում*՝ Երցոյ*)*